



ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՉՈՒԹԻՒՆՆ ԸՆԾՊԱՑՈՒՄ:

«Եր յիսո իմ սահման»

Ա

Կնապատ գնաց Քրիստոսից առաջ Նորա կարապեալ՝ այդտեղ առանձնութեան մէջ սիլվըն առաւ, զօրացաւ և ինչպէս երկնքի որոտումն հնչեց ապաշխարութեան այն հուժկու ձայնը, որ Աւետեաց երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը զլորուելով ճանապարհ պէտք է հարթեր Տիրոջ համոր: Անապատ գնաց Քրիստոսից յետոյ նաև Նորա վընտրութեան անօթ» առաքեալը. այդտեղ հաշիւ տեսաւ իւր անցեալի հետ և թոյլ տուաւ, որ Դամակոսի ճանապարհին իրեն յայտնուած լոյսը մինչև հոգու ամենազազտնի խորքերը թափանցէ, լուսաւորէ, և վերանորոգէ իւր ամբողջ էութիւնը, աստուածային սիրոյ սրբազն հուրը բորբոքէ սրտի սեղանի սրբութեան վերայ՝ մի հուրը որ համաձարակի բոց պէտք է դառնար, ամբողջ հեթանոս աշխարհի մէջ ծաւալիր: Դէպի անապատ է զիմում ինքը Քրիստոս, մլրաւթիւնից անմիջապէս յետոյ: Այն Հոգին, որ բերել էր Նորան վերելից հեր Երկնաւոր Հօր ձայնը. «Դու ես իմ սիրելի Որդին, Բո մէջ հաճոյը գտայր—թոյլ չեր տալիս Նորան այլես Նազարեթի խաղաղ հովիտը վերակառնալ և անցայտ ու աննշան հիւսնի կիանքը շարունակելը Նա Աստուածոյ Որդին էր: Խորացիլի ժողովրդին խոստացուած Մեսիան աշխարհի Փրկիչը, և ժամանակը հասել էր, երբ պէտք է յայտնուել իւր ժողովրդի մէջ և հեթանոս աշխարհի առաջ՝ Աստուածոյ արքայութիւնը երկրի վերայ հաստատելու վրկութեան և երանաւէտ կեանքի ճանապարհները բա-

նալու: Իսկ զորա համար հարկաւոր էր, որ աշխարհի մէջ թագաւորող և մարդոց սրտերը իւր ճանկերի մէջ գերի բանով չարութեան ողին միանգամից իւր բոլոր զօրութեամբ Նորա զիմաց ելնէր, և երեար, թէ արգեօք պէտք է, կարողանանց նա յաղթահարել և կապել այդ հզօրին, որ ապա մտնէ, և աւար հարկանէ նորա տունը: * — Այս խորհրդաւոր մրցման նկարագիրը մեր առաջն է դնում ահա անապատի փորձութեան պատմութիւնը:

Երեք աւետարանները բոլորովին նոյնութեամբ չեն վերարտապրում այդ պատմութիւնը: Մարկոս յիշում է միայն համառօտ կերպով, որ Յիսուս միլլաւութիւնից անմիջապէս յետոյ, ս. Հոգուց մղուած, անապատ է, գնում, ուր մնում է քառասուն օր և փորձուում սատանայից: Գաղանների հետ էր Նա այդտեղ և հրեշտակները սպասաւորում էին Նորան: Այդ նշանակում է հաւանականարար, թէ Նա մարդկանցից առանձնացած էր ապրում և զազանները չեին կարող վնասել Նորան, որովհետեւ հրեշտակները պաշտապանում էին: և ոչ ինչպէս հներից շատերը ենթագրել են, թէ չարը զազանների կերպարանքով երեսում էր Նորան: — Ղուկաս աւետարանիչը Մարկոսի հետ համաձայն յիշում է, որ Յիսուս քառասուն օր փորձուում էր սատանայից, բայց և, համաձայն Մատթեոսի հետ երեք իսկական և զիսաւոր փորձութիւնները ցոյց է աալիս վերջին օրը աեղի ունեցած՝ միայն այն տարբերութեամբ, որ այստեղ երկրորդ և երրորդ փորձութիւնը յետ ու առաջ են: Բնական, և ըստ ամենայն հաւանութեան նախնական, կարզն այն է, որ Մատթեոս է յառաջ բերում զուցէ, ինչպէս շատերը կարծում են, Ղուկաս

* Տիս. Մարք. մթ. 29.

այդ կարգը նորա համար է փոխել, որ մտածել է, թէ անսպատից աւելի յարմար էր նախ սարը բարձրանալ, ապա նրուսաղեմի տաճարը գալ և այնտեղից ժողովրդի մէջ մոնել՝ քանի ընդհակառակն: Յամենայն դէպս այս երեք փորձութիւնների մէջ մի մեծ խորհուրդ է պատկերանում, մի ծանր հոգեկան պայքար, որին եթէ մի անդամ ամենալնդարձակ չափով նոյն ինքն Աստուծոյ և Մարդոյ Որդին է, ենթարկուել աւելի փոքր չափով և յաճախ ենթարկուում են զրեթէ բոլոր Նորա հետեւղ ները:

Զուր աշխատանք կլինէր ի հարկէ՝ կամենալ հասկանալի և շօշափելի կացուցանել մեզ, թէ ինչպէս կատարուեցան այն գործողութիւնները, որոնց մասին պատմուում է, այստեղ, թէ ինչ էր և ինչ կերպարանքով երեցաւ այն սատանան, որ եկել էր փորձելու Յիսուսին; Սատանայի և նորա արրանեակների մասին, ինչպէս յայտնի է, շատ յաճախ խօսք է լինում աւետարանների մէջ. Քրիստոսի հրաշների մեծ մասը դիւհարնելլի բժշկութիւններ են, և մենք զիւահարների բերանից լուսմ ենք, որ Նա եկել էր գեերին կորցնելու (Մարկ. Ա. 24), որ վերջին դատաստանի օրը նաև զեկոր պէտք է վերջնականապէս դատապարտուին և կորստեան մատնուին (Մատթ. Բ. 29. Համ. ԽԵ. 41): Թէ ինչպէս դիւհական իշխանութիւնը իրեմ մի գործոն, աշխարհը կաշկանքով ոյժ էր ներկայացնում Փրկիչը, որի դէմ նաև մաքառելու և յաղթանակ կանգնելու էր եկել երեւում է օրինակ նորա զդացած հրանուանքից, երբ իւր աշխերաները քարոզութիւնից վերապառնում են և պատմում՝ «Դեերն ևս հնազանդում են մեղ Քո անունով»: «Տեսայ, ասում է Նա, սատանային շանթի նման երկնքից փայլ ընկնելլիս» (Ղուկ. Ժ. 17. 18.). սատանայի իշխանութիւնը խորտակուած ընկած էր այն օրուանից, երբ աշխարհի վերայ գտնուում էր մէկը, որ այդ իշխանութեան ոչ մի կերպ այլ ևս չէր ենթարկուում, որ ընդհակառակն ինքը նորա վերայ իշխանութիւն բանեցնել և իւր իշխանութիւնը ուրիշներին հաղորդել կարող էր: Սատանայի իշխանութիւն էր զանում Փրկիչն ամեն տեղու ուր զօրեղ ընդգիմարդու-

թիւն կար բարւոյ և ծշմարտութեան պահանջների գէմ: այդ իշխանութիւնն ամենից աւելի ախյայտնի կերպով արտայայտուած էր տեսուում այն տեսակ հիւանդութիւնների մէջ, որոնք կաշկանդում են մարդու հոգին և անընդունեակ գարձենում բարոյական կեանքի համար. այդ պատճառով և Նա իւր հրաշտործ զօրութիւնը, որ երբեք առանց բարոյական նպատակի՝ ցոյցի համար միայն հանգես չէր բերուում, առաւելապէս այդպիսի «դիւհարներ» բժշկելու վերայ էր զործ զնում: Բայց թէ որչափ հեռու էր Նա սատանայց անուան հետ որ և է նախապաշարմունք կապելու ցանկութիւնից՝ պարզ ցոյց է տալիս այն հանգամանքը, որ Նա նոյն այն անսպատառում արտասանած «Երթ յետս իմ, սատանայց խօսքերը մի ուրիշ տեղ իւր ամենամօտ աշակերտ Պետրոսին է ուղղում: ինչ կերպարանքով կուզէ երեար չարը՝ եթէ նա ուղիղ ձանապարհից գայթակեցնում է և սովորեցնում Աստուծոյ կամաց հակառակ վարուել սատանայական ողուց է ներշնչուած: Բաւական է ի միջի այլոց ի նկատի ունենալը որ երբորդ փորձութեան համար սատանան հանում է Փրկչին «մի շատ բարձր լերան վերայ և ցոյց ալլիս Նորան աշխարհի բոլոր թագաւորութիւնները և նոցա փառքը», «ի վարկեան ժամանակի», ինչպէս աւելացնուում է Հուկաս՝ որպէս զի համոզւենք, թէ անապատի փորձութեան խորհրդաւոր պարագաները զգայական չափերի տակ գնելու հեարաւութիւն չկայ. ուր է գտնուում այն լետոր, որի վերայից աշխարհի բոլոր թագաւորութիւնները մի ակնթարթում կարելի լինել տեսնել: Խորհուրդը պէտք է իրեւ խորհուրդ ըմբռնել, և այդ կողմից, ինչպէս ակնարկեցնեք, շատ բան է սովորեցնում Փրկչի փորձութեան պատմութիւնը:

Սատանան մօտենում է առաջին անգամ այն կողմից, որ ամենաթոյն է մարդու մէջ, որով Նա ամենից աւելի կապուած է աշխարհի հետ և կարօտ արտաքին օգնութեան: Նրկարառեւ անսուազութիւնից յետոյ՝ Փրկիչը, իր ծշմարիտ կատարեալ մարդ, քայլ էր զգում՝ հացի անհրաժեշտ պահանջ, և աշա փորձիչը թելազրում է Նորան, եթէ Դու Աս-

տուծոյ Որդին ես (որ հարկը պահանջած ժամանակ անապատը շահմարան դարձնել մի քանի հացով հազարների կերպել կարող ես), ասաւ թող այս քարերը հաց լինին։ — Նման փորձութեան ենթարկուել եր մի ժամանակ մարդկային ազգի նախամայր Եւան և առաջին անգամից թափարզի մէջ ընկել այնուհետեւ Եւայի բոլոր զաւակների համար այդ մէկ փորձութիւնը բաւական էր եղել՝ Աստղծուց կարելու և աշխարհի գերին գարձնելու։ Չէ՞ որ աշխարհը վայելել մեր բնական իրաւունքն է, մտածում են մարդիկ մեծ մասսամբ նաև այսօր։ Հացը սնունդը անհրաժեշտ կարիք է կեանքի պահպանութեան համար, իսկ կարիքը ոչ մի օրէնք չէ ճանաչում մենք ամեն միջոց պետք է գործ դնենք, եթէ կարելի է նաև քարերը հաց դարձնենք, մեր այդ բնական կարիքը լցուցանելու։ Եւ ահա բոլոր մարդիկ հացի գերի լինելով, հացըն իրրեւ ապրուսափ միակ միջոց նկատելով, գերի են լինում նաև այն աշխարհի, որից սպասում են իրենց ապրուսա տուող հացը։ Սակայն այդպէս չմտածեց և գորա համաձայն չվարուեցաւ մեր Փրկիչը. «Գրուած է, Միայն հացով չէ ապրում մարդ, այլ ամեն մի խօսքով, որ ենում է Աստուծոյ բերանից», ասաց Նա։ Գրուած է, աշխարհի մէջ թագաւորող օրէնքը՝ բնական պահանջների լրացման օրէնքը, միակ օրէնքը չէ և ճշմարիտ օրէնքը, այլ աղաւաղումն է միայն բուն այն տատուածային օրինաց, որ միանգամ սաեղծագործութեան մէջ ուղիղ մոքով արտայայտուելուց և մարդոց կողմից սխալ ըմբռնուելուց յետոյ՝ կրկին պարզութեամբ արտայայտուել է, աստուածախոս մարդոց բերանով և զլով, ա. Դրքի մէջ։ Եւ այդ աստուածային օրէնքը յիշեցընում է մեզ, որ տիեզերքի Արարիչը մարդոց կեանքի պահպանութեան համար բոլոր կարեւոր պայմանները աշխարհի մէջ գնելով՝ նորան հաց տալով հանդերձ, չի դադարում այնուամենայնիւ կենդանութեան միակ ճշմարիտ օրդիւր լինելուց և կարող է ամեն բոլէ իւր կենդանաբար խօսքով նոր միջոցներ սաեղծել կենդանութեան, նոր ուղղութիւն տալ կեանքին։ Այս պատճառաւ մարդիկ ոչ թէ, իրրեւ հասարակ նիւթեղէն արարածներ, իրենց

մարմնի բնազգութիւններին պէտք է հետեւն, այլ իրրեւ Աստուծոյ անմահ կենաց հաղորդակից լինելու կոչուած, և Նորա խօսքը լսելու և ըմբռնելու ընդունակ՝ հոգիներ պէտք է իւրաքանչիւր քայլափոխում միա գնեն, թէ ինչ է Աստուծոյ կամքը, Նորա թելազրութիւնն իրենց հոգուց մէջ, և ըստ այնմ՝ վարուին, որպէսզի ժամանակաւոր և առերեսոյթ կեանք ձեռք բերելու հետամծուա եղած միջոց՝ յաւիտենականն ու խկականը չկորցնեն։

Մարդոց մի երկրորդ ամենավեցոյլ զիւրաւ գայթակղութիւնների ենթարկուող և դէպի կործանումն տանող կողմը մնափառութիւնն է՝ մէկ անգամից, անաշխատ կերպով և զիւթական միջոցներով մեծ փառքի հասնելու ձգտումը։ Փորձիչն այդ թուլութիւնից ևս ամենայն յաջողութեամբ օգաուել էր նախածնօղներն խարելիս, երբ արգելուած պըտուղն ուաէք, ձեր աչքերը կրացուին և զուք աստուածների նման կլինէք, առել էր նա, — և նոյա աչքերը, գայթակղութեան ենթարկելուց յետոյ, յիրաւի բացուել էին, բայց միայն իրենց մերկութիւնն ու ոչնչութիւնը տեսնելու համար։ Նոյն փորձը կրկնում է նա այժմ ևս և կրկին խօսա ճարպիկ կերպով։ Նա տանում կանգնեցնում է Փրկչին տաճարի մի թեւի վերայ (հայերէնը՝ ի վերայ աշտարակի տաճարին), որով հասկացուում է կամ կըտուրի մի ծայրը, կամ տաճարի հարաւային կողմում գտնուող պալատի այն խոր անգունդի վերայ կախուած՝ բուրզը, որի վերայից նաև յաղի աչքերը սկանուում էին, ըստ Յովիսապոսի։* Սատանան տեսնում է, որ ս. Գրքի խօսքերը մեծ հեղինակութիւն են Փրկչի համար, և յարմառուում է Նորա ճաշակին. «Եթէ Աստուծոյ Որդի ես, ցած ձգիր քեզ, որովհետեւ գրուած է, թէ Հրեշտակներին պատուել է տուած (Աստուծոյ կողմից) Քո մասին, որով ձեռների վերայ կը վերցնեն քեզ, որպէս զի քարին չգիտչէ ուքդ։» — Քանի քանի ասպարիզի վերայ նոր ուք գնելող երիտասարդների առաջ զրուում է նոյն այդ փորձութիւնը, և քանին այդպիսի աչքեր մթնացնող բարձրու-

* Նոյն այս քեչից 62 թուիմ վայր գլուխցին Յակոբոս Տեատր եպորը։

թիւնից անդունդն են նետուում և խորտակուում։ ինչ որ այսուղ Աստուծոյ կողմից՝ նոքա առջասարակ բաղդի կողմից պատրաստած են երեակայում։ փորձիր բաղդգ՝ մի քանի կողէկ ունիս զրաբանում թուլզմ խաղաւ խաղատմանը զնիր, — մի անգամից կհարստանաւ և վառաւոր կեանք կրվացելես։ Կարիճ ես, յառաջ նետուիր, ծովն ընկիր՝ ոսկի մատանին հանելու, հեռու աշխարհներ զնա՞ս ոսկէ, հանքեր դանելու, կամ յանգուղն ձեռնարկութիւններ սկսիր՝ շքանշաններ, աստիճան, մեծ փառք ձեռք բերելու համար։ — Յիսուս ասպարէզ էր ելում իրրե Աստուծոյ Որդի, իրրե Խորացէի խոստացեալ Մեսիան։ Նա կանգնած էր այն տեղում, որտեղ կենդրունանում էր ներժողովրդի հոգեւոր կեանքը և որտեղից օրէնք էր բայխում նորա համար։ ի՞նչ ուրեմն աւելի հրապուրիչ և զիւրաւ իրագործելի բան, քան մի ակնյայտնի հրաշքով ցոյց տալ, թէ յիրաւի նմքն է, որին ակնկալում են։ թէ, կարող է նմքը կատարումն առ այն բալոր զիշապատառ ակնկալութիւններին, որ այս առաջարի մէջ բուն զրած ինքնադրու օրէնստուները կապում էին Մեսիայի անոււան հետ։ Այդպէս առաջին անգամից և եթ իրեն Մեսիա հաշակիլով և իշխանարար իւր ժողովուրդի զլուխն անցնելով՝ Նա զլորուած կլինէր ի հարկէ անորոշութիւնների և փորձութիւնների մի ահագին անդունդի մէջ, հոռվմէական լեզունների հետ գործ կունենար, բայց ստանայի ի՞նչ հոգն էր այդ. թող հրեշտակները զային օգնելու և հանելու Նորան այնտեղից։ Յիսուս զիտէր, որ նմքն Աստուծոյ Որդին է, զիտէր որ կարող է երկնքից հրեշտակների զբնդեր իջեցնել բայց զիտէր և այն, որ Աստուծոյ օրէնքը չէ՝ բռնի ուժով և զիւրական միջնուներով աշխարհն ափելը, այլ բարոյական ծանր, տոկուն աշխատութեամբ արդար հոգիներ վաստակելը, և Նա չկամեցաւ փորձել Աստորն՝ ներ օրէնքի հակառակ բան անել տալ։

Տիրել աշխարհին՝ այդ այնուամենայնիւ Մեսիայի ցանկութիւնը պէտք է մնէր, ինչպէս և աւելի կամ պակաս չափով ամեն մի հասարակ մահկանացուի ցանկութիւնն է. և ահա ստանան հանդէս է զայիս իւր բոլոր

մերկութեամբ։ Նա, որ ո՛չ մի բաժին չունէր կեանքից, որ, իրրե չորութեան ամփոփումն ոչ մի տեղ չպէտք է գտնէր աշխարհի մէջ, ուր բարութիւն և կեանք կայ՝ իրրե աշխարհի կատարեալ տէր է ներկայանում և խոստանում է տալ իւր չունեցածը նոցա, որոնք իւր երեակայական իշխանութիւնը կճանաշն և իրենք ևս այդպիսի երեակայական իշխանութեամբ կրաւականանան։ Եւ որչափ մարդիկ ապրել են այդ երեակայութեամբ, անընդունակ հրեշտակի կերպարանքի ներկոյ ժագնուած չարի ու գէմքը տեսնելու, բայց Աստուծոյ Որդու թափանցող ոչքից այդ գէմքը թափնուել չէր կարող. «Կորիք սատանայ, բացականչումէ Նա լի ցամամբ, գրուած է. Զօ Տէր Աստորն երկրպագութիւն տուր և Սորան միայն պաշտիր» — Եւ փորձից չքացաւ. «առ ժամանակ մի», աւելացնում է Ղուկաս աւետարանիչը, և մենք տեսնում ենք, որ Նա յիրաւի ներ գործունէութեան ասպարիզում շատ փորձութիւնների յաղթելուց յիտոյ, տագնապի մէջ է գեռ Գեթսեմանի պարտիդում, խաչելութիւնից մի քանի ժամ առաջ. ամենածանկը փորձութիւնը՝ խոյս տալ խաչի սարսափելի մահից և զիւրին ճանապարհով ներ գործը զլուի հանել խոռվածմէ և այսուղ Նորա պայծառ հոգին արեան կայլակների նման քրտինք իջեցնում Նորա ճակատից. բայց նոյն Աստուծոյ հրեշտակը, որ սպասաւորում էր Նորան անպատում ստանայի հեռանալուց յիտոյ՝ զօրացնում է, Նորան նաև այսուղ, և Նա վերջնականապէս յաղթում է աշխարհին իւր բոլոր փորձութիւններով։ — Բայց այդ բոլէին քնած էր Պետրոս, ինչպէս սրամութեամբ նկատում է մի մեկնարան, հակառակ Տիրոջ կրիստի պատուերներին՝ արթուն լինել փորձութեան մէջ չընկնելու համար. քնած էր այն Պետրոսը, որ մի օր կամենում էր Նորա փորձից լինել և ետ կասեցնել չարչարանաց գէսի փրկութիւն տանող ճանապարհից, և այդ բոլին գուցէ իշխանութեան ու փառքի երազներ էր տեսնում. Նա նմքը յիտոյ բժշկուեցաւ այդ երազներից, բայց ժառանգութիւն թողեց նոյնը իւր աթոռի վերայ նստող «Քրիստոսի փոխանորդերին» որոնք ցայսօր ես, փոխանակ խաչի

Ճանապարհի վերայ գէմ դնելու չարին՝ աշխարհային իշխանութեան երազներ են տեսնում: Եւ մեքն ամենքս տեսնում ենք այդպիսի երազներ, որոնցից ազատուելու և արթուն լինելու զօրեղ խթան պէտք է լիներ անտպատի փորձութեան պատմութիւնը:

Կ. Պ.



ՅԻՍՈՒՄԻ ՆԵԶԱՐԵՔՈՒՄ ԱՆՑՐԸ ԽԵՂԵՂ ՏԵՐԻՆԵՐԸ: *

Յիսուսի երկրաւոր կենաց առաջին օրերի մասին մեր ունեցած տեղեկութիւնները բաւական լրիւ են. բայց Եղիպատոսից վերադառնուց և Սաղարեթում բնակութիւն հասաւուելուց անմիջապէս յետոյ նոցա թելլ կտրուեմ է, և Յիսուսի կեանքի մնացորդը մինչեւ նորա հրապարակական գործունեութեան սկսուիլը, ծածկուած է, թանձր վարագուրզ, որ միայն մի անգամ թեթեակի բացուում է: Մենք կցանկանայինք հարկաւ նոյն լրութեամբ շարունակել մեր պատմութիւնը նաև նորա տպայութեան և երիտասարդութեան տարիների համար: Նոր ժամանակի կենսագրութիւնների մէջ քիչ տեղեր կան աւելի հետաքրքիր, քան հերոսի մանկութեան օրերին վերաբերեալ զբոյցները, որովհեան նոցա մէջ յաճախ նախագծուած կարող ենք տեսնել, փոքր չափով և հաճելի պարզութեամբ, ապագայ կեանքի ըլոնաւութիւնը և պատկերը: Ի՞նչ չէինք տայ իմանալու համար նաև Յիսուսի սովորութիւնները, ընկերուական կեանքը, խօսքին ու գործե-

* Յառաջ ենք թիրում մի հատուած անգլիացի Ջեմս Շալկերի «Յիսուս Քրիստոսի կեանքը» (Rev. James Stalker.—The Life of Jesus Christ) գրից, որ իւր տեսակի մեջ նորագոյնն է եւ կարև միջոցում մած ընդունելութիւն դաւ թէ Անգլիայում եւ թէ առհասարակ Քրիստոնեական Եւրոպայում: Այն օրինակը որ մանք՝ գիրմաններն բարձաւորիւնն եւս ալիք ունենալով, ամրոցական հայրեն փոխադրել ենք ձեռնարկել: «52 - բ հազար» մակագրութիւնն է կրում:

Կ. Պ.

րը այսքան տարիների ընթացքում: Միայն մի ծաղիկ կայ այդ թագուն պարտիզի պատից դուրս կախուած, և այդ այնպիսի պատուական ծաղիկ է, որ մեր սիրաը լիցնում է բուռն ցանկութեամբ, տեսնել նոյն խոկ պարտէղը: Սակայն Աստուած, որի լռութիւնը նոյնչափ հրաշալի է, որչափ և խօսքերը, հաճել է փակած պահել այն:

12. Բնական բան է, որ մինչ Աստուած լռութիւն է պահպանում: խոկ մարդիկ հետաքրքրուում են սաստիկ՝ նոցա երեակայութիւնը պէտք է աշխատեր պակասը լեցնել: Յիրաւի նախնական եկեղեցւոյ մէջ հանդէս եկան տարականոն աւետարաններ, իրրեւ թէ մանրամասն տեղեկութիւնները բովանդակող այն բաների մասին, որոնք պակաս են խոկական աւետարանների մէջ: Մեծ տեղ են բռնուում նոցանում առանձնապէս Յիսուսի մանկութեան վերաբերեալ խօսքեր և գործեր: Բայց նոքա ցոյց են տալիս միայն, թէ այսպիսի մի խնդիր որչափ բարձր է, մարդոց երեակայութիւնից, և թէ որչափ հիմնաւոր են և արժանահաւատ սացրքի խօսքերը՝ նոցա կեղծ և արհեստական պատմութիւնների հետ համեմատած: Նոքա գարձուում են Յիսուսին քմահած և անշահ հրաշքներ գործող մէկը, որ կաւից թռչուններ է շինուում և թռցնուում, իւր խաղընկերներին այծերի է փոխարկուում են: Մի խօսքով, անպէտք առասպելների ժողովածուներ են զոքա:

13. Այս օտարուաի մոլորութիւնները զգուշացնուում են մեղ՝ երեակայութեան ցնորդներով սրբազն ցանկապատի մէջ թափանցելու չաշխատել: Բաւական է որ մենք զիտենք, թէ Յիսուսի հասակի հետ զարգանուում էին խմաստութիւն և շնորհք Աստուածոյ ու մարդոց առաջ*: Նա խոկական մանուկ էր և խոկական պատանի, և անցաւ բնական զարգացման բոլոր աստիճանները: Մարմինն ու հոգին միասին էին զօրանուում. որչափ մէկի մէջ աւելանուում էր այրական կորովը՝ նոյնչափ միւսի մէջ զիտութիւնն ու եռանձը: Նորա բաց բնաւորութիւնն այնպէս շնորհալի

* Դաւիթ Բ. 51,